ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն - Հայոց լեզվի , գրականության ուսուցիչ

Թեմա - Որոշչի արտահայտությունն ու նրա ուսուցման մեթոդիկան

Կատարող - Բարսեղյան Գայանե Մեսրոպի
Ազգանուն, անուն, հայրանուն

Ղեկավար - Գալստյան Աշոտ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ազգանուն, անուն, գիտական աստիճան, կոչում

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն…….3
2.Հիմնական գլուխներ……..6
3.Եզրակացություն……..11
4.Օգտագործված գրականության ցանկ…...12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքը բաղկացած է բովանդակությունից ,ներածությունից, «Որոշչի արտահայտությունն ու նրա ուսուցման մեթոդիկան» , եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքային տեքստը կազմում է 12 տպագրական էջ:

Կրթական գործունեության ընթացքում ուսուցանողն իր առջև դրված խնդիրները բարեհաջող իրականացնելու և ցանկալի վերջնարդյունքի հասնելու համար պետք է կատարի մեթոդների ճիշտ ընտրություն, այսինքն՝ մեթոդը հանդիսանում է կապող օղակ նպատակի և վերջնարդյունքի միջև:

Ճիշտ չէ ուսուցանողների կողմից այն դիտարկումը, որ այս կամ այն թեման դժվար ընկալելի է ուսումնառողների կողմից և դժվար է այն ուսուցանելը: Այս դեպքում հմուտ ուսուցանողը նպատակային արդյունքի հասնելու համար պետք է հասկանա, որ դասավանդողի և աշակերտի նպատակները պետք է համընկնեն, իսկ այդ ամենն իրականացնելու համար պետք է դիմել մեթոդական գործիքների ճիշտ ու արդյունավետ ընտրությանը:

Մեթոդները ըստ հատկանիշների՝ բաժանվում են 4 խմբի, ունեն իրենց տեսակները:

Մեթոդների **առաջին** խումբը կազմում է ուսուցման և ուսումնառության խոսքային մեթոդները՝ դասախոսություն, պատմում, բացատրություն, զննական մեթոդները՝ պատկերազարդում, ցուցադրություն, տեսամեթոդ:

Այս մեթոդների կիրառության ընթացքում ուսուցանողը ներկայացնում և շարադրում է համակարգված գիտելիքի քանակը՝ հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները, ընկալունակության աստիճանը, առարկայական ծրագրով նախատեսված տրվող գիտելիքի քանակը, իսկ սովորողներն ընկալում են, հասկանում, մտապահում՝ փորձելով անսխալ վերարտադրել լսածն ու ընկալածը։

Երկրորդ խմբի մեթոդների կիրառության ընթացքում ուսուցանողը կազմակերպում է սովորողների գիտելիքների յուրացման և ամրապնդման, նոր գիտելիքների որոնման նպատակով համապատասխան կարողությունների և հմտությունների ձևավորում։ Իսկ սովորողներն ուսուցչի անմիջական ղեկավարությամբ կատարում են ստացած գիտելիքի համեմատություն, տալիս են եզրակացություններ, այսինքն՝ մղում դեպի պրակտիկ գործողությունների իրականացմանը։ Այս մեթոդների մեջ են մտնում գրավոր աշխատանքը, աշխատանք գրքի հետ, լաբարատոր աշխատանքները, փորձերը, վարժությունները, ուսումնաարտադրողական աշխատանքը։

Երրորդ խմբի մեթոդներն են բանավեճը, ուսումնական զրույցը, զրույց կլոր սեղանի շուրջ, ուղեղային գրոհը, դերախաղը և այլն։

Այս մեթոդների կիրառությունը նպաստում է ստեղծագործական մտքի, վերլուծությունների, սեփական կարծիքի ձևավորման և այն արտահայտել կարողանալու ունակությունների և հմտությունների ձևավորմանը։

Չորրորդ խմբի մեթոդները միտված են սովորողների արդեն ինքնուրույն, անհատական կամ խմբային ուսումնառության ակտիվացմանը, նրանց

կողմից իրականացվող հետազոտական աշխատանքների իրականացմանը։

Այս մեթոդների մեջ են մտնում պրոբլեմային հանձնարարությունների մեթոդը, անհատական մեթոդը, գործնական ուսուցան քառափուլ մեթոդի կիրառումը, գործնական ուսուցման ուղղորդիչ տեքստի մեթոդը, նախագծերի մեթոդը։

ՈՐՈՇՉԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՐԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Որոշչի և որոշյալի շարադասությունն ու կետադրությունը ուսուցման կարևոր խնդիրներից է։Նախ և առաջ աշակերտը պետք է հստակ հասկանա որոշչի արտահայտությունը, տարբերակի գոյական անդամի լրացումները բայական անդամի լրացումներից։«Որոշչի պաշտոնով ամենից առաջ հանդես են գալիս հատկանշային իմաստ արտահայտող բառախմբերը՝ածականը, թվականը, սրանց հարակից դերանունները (ցուցականների մեծ մասը , որոշյալ, անորոշ,հարցահարաբերական,ժխտական, անորոշ դերբայի սեռական (տրական)հոլովը,հարակատար և ենթակայական դերբայները, ինչպես նաև գոյականները՝ իրենց բոլոր հոլովաձևերով),որոշչի պաշտոնով հանդես են գալիս նաև բառակապակցությունները, այդ թվում նաև դարձվածային միավորները »։(Տե՛ս Ա.Պապոյան , Խ. Բաղիկյան «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն»էջ 116)

«Մտածի՛ր, զույգվի՛ր , քննարկի՛ր »մեթոդով կարող ենք ուսումնասիրել «Որոշչի և որոշյալի շարադասությունն ու կետադրությունը»թեման.այս ինտերակտիվ մեթոդը կօգնի աշակերտներին ուսումնական նյութը յուրացնել փոխգործակցության միջոցով։

«Ինտերակտիվ» նշանակում է փոխազդող, փոխներգործող («Inter»՝ փոխադարձ, «act»՝ գործողություն)։ Ինտերակտիվ դասը փոխգործակցություն է ոչ միայն դասավանդողի և սովորողի, այլև հենց

իրենց՝ սովորողների միջև, ուսումնական նյութի և սովորողների միջև: Ավանդականների հետ համեմատած ուսուցման ինտերակտիվ մոդելներում փոխվում է նաև փոխգործակցությունն ուսուցչի հետ. նրա ակտիվությունն իր տեղն է զիջում սովորողների ակտիվությանը, ուսուցչի խնդիրն է ստեղծել պայմաններ նրանց նախաձեռնության համար: Ինտերակտիվ տեխնոլոգիաներում սովորողները հանդես են գալիս որպես լիիրավ մասնակիցներ, նրանց փորձը պակաս կարևոր չէ ուսուցչի փորձից: Այս դեպքում ուսուցիչը ոչ այնքան տալիս է պատրաստի գիտելիքներ, որքան խթանում է սովորողների ինքնուրույն որոնումը: ՈՒսուցիչը (բաժանում է խմբերի, խթանում է նրանց ինքնուրույն տվյալներ հավաքելը, համաձայնեցնում է առաջադրանքների կատարումը, մինի շնորհանդեսների նախապատրաստումը և այլն): Խորհրդատուի դերում ուսուցիչը դիմում է աշակերտների փորձին, օգնում է գտնել արդեն ձևակերպված խնդիրների լուծումը, ինքնուրույն ձևակերպել նորերը և այլն:Պատրաստի աշխատանքները կարելի է ստուգել «Շրջագայություն պատկերասրահում» մեթոդով, որի նպատակն է տեղեկություններ փոխանակելը, քննադատողական մտածելու և վերլուծելու կարողությունների, հմտությունների զարգացնելը:

Վերջին տարիներին ուսուցիչների առջև բացվում է գործունեության լայն դաշտ՝ ստեղծագործել, փորձարարել և որոնել ուսուցման իդեալական տարբերակ: Յուրաքանչյուր թեմայի ուսուցում պահանջում է յուրօրինակ մեթոդներ և լուծումներ՝վերջնարդյունքն ավելի տեսանելի և գերազանց դարձնելու նպատակով:« Որոշչի և որոշյալի կետադրությունը» ավելի հասկանալի և ուսանելի դարձնելու համար աշակերտը պետք է լավ պատկերացնի ուսումնասիրող թեման , տվյալ դեպքում ՝ որոշիչ որոշյալ

կապակցությունը, համաձայնությունը, շարադասությունն ու կետադրությունը։« Ժամանակակից հայերենում որոշիչ որոշյալի համաձայնությունը տեղի է տվել՝վերացել է .այն հատուկ էր գրաբարին, ինչպես՝միով բանիվ, մեծավ մասամբ ,մեծ վարպետ, մեծք վարպետք, մեծաց վարդապետաց, տանէ մեծէ .եղբարք հարազատք, Մեծի տանն Կիլիկիո և այլն։

Ժամանակակից հայերենում որոշիչն ու որոշյալն առավելապես առդրությամբ են կապակցվում իրար հետ, որոշիչը որոշյալի վրա դրվում է ուղիղ ձևով և նրա հետ չի համաձայնում (խելոք ուսանող, խելոք ուսանողից, խելոք ուսանողներ, խելոք ուսանողներից,խելոք պատասխան, խելոք պատասխաններով և այլն)։»տես Ա.Պապոյան , Խ.Բաղիկյան«Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն»
էջ 123

Ժամանակակից հայերենում որոշիչն ունի թե՛սովորական , թե՛ շրջուն շարադասություն։Նախադաս դիրքում որոշիչը չի տրոհվում, ուստի ուսուցման ժամանակ ավելի կարևորում ենք հետադաս որոշչի ուսուցանումն ու կետադրությունը։Այս թեմայի ժամանակ կարևորում եմ «Կարճ դասախոսություն» մեթոդը։

«Հետադաս որոշիչը որոշյալից բաժանվում է բութով, իսկ նախադասության մնացած մասից՝ստորակետով։

Հետադաս որոշիչը չի տրոհվում , եթե արտահայտված է մեկ բառով։

Հետադաս որոշիչը տրոհվում է բութով , եթե արտահայտված է

- բազմակի որոշիչներով

- բառակապակցությամբ
- դերբայական դարձվածով»տե՛ս Հ.Բարսեղյան, Փ. Մեյթիխանյան «Հայոց լեզու» 8-րդ դասարանի դասագիրք էջ 95

Այսօր կրթությունը ձևավորում է երեխաների կրթական գործունեությունը, պահպանում է կրթական համակարգը և ճանաչողական դրդապատճառները, իրականացնում է կրթական նպատակները, վերահսկում և գնահատում է ուսումնական նպատակներն ու նրանց արդյունքները:

Դպրոցականն ունի տարիքային առանձնահատկություններ. անկայուն ուշադրություն, տեսողական-պատկերավոր մտածողության գերակշռում, բարձր շարժողական ակտիվություն, ճանաչողական հետաքրքրությունների բազմազանություն:

Դասի ընթացքում երեխաների ուշադրությունը պահելու համար անհրաժեշտ է ակտիվ և հետաքրքիր դասաժամի կազմակերպում:ՄԻջառարկայական կապերի ապահովմամբ աշակերտները ցուցում կստանան ստեղծել ցուցապաստառներ՝հետադաս որոշչի կետադրության կանոնների համապատասխան օրինակներով: Իմ դիտարկումների ընթացքում ես հանգել եմ այն եզրակացության, որ առանց շարժառիթի կամ թույլ շարժառիթով գործունեությունը ցանկացած ձևերի և մեթոդների կիրառման դեպքում կա՛մ ընդհանրապես չի իրականացվում, կա՛մ ծայրաստիճան անկայուն է լինում: Թե աշակերտն իրեն ինչպես է զգում որոշակի իրավիճակում, կախված է այն ջանքերի ծավալից, որոնք նա գործադրում է իր ուսման ժամանակ: Այդ պատճառով կարևոր է, որ

ուսուցման ամբողջ գործընթացը երեխայի մոտ առաջացնի ինտենսիվ և ներքին դրդում՝ լարված մտավոր աշխատանքի համար: ՈՒսուցման համար լավ միջավայր է նաև ուսուցանվող նյութն առօրյայի հետ փոխկապակցելու փորձերը: Իմ պրակտիկայի ընթացքում ես պարզեցի, որ դպրոցականի զարգացումն ավելի ինտենսիվ և արդյունավետ է տեղի ունենում, եթե նա ներառված է գործունեության մեջ, որը համապատասխանում է նրա տարիքային առանձնահատկություններին: Եթե դրական հույզեր է առաջացնում ուսուցումը, իսկ կրթական գործընթացի մասնակիցների մանկավարժական ներգործությունը հիմնված է վստահության վրա, ապա ուժեղացնում է հույզերի և ըմբռնման դերը:

Կայուն ուսումնական շարժառիթի (մոտիվացիայի) և ճանաչողական ակտիվության զարգացման նպատակով ես կիրառում եմ աշակերտների գործունեության բազմազան մեթոդներ՝ խրախուսում, հաջողության իրավիճակների ստեղծում, պրոբլեմային իրավիճակների ստեղծում, ստեղծագործական առաջադրանքների կատարում, պատասխանատվության ձևավորում, օգտակար լինելու ցանկության ձևավորում, փոխօգնության իրավիճակների ստեղծում, կոլեկտիվ աշխատանքի արդյունքների նկատմամբ հետաքրքրություն, ինքնաստուգման և փոխստուգման կազմակերպում, դրդում այլընտրանքային լուծումների որոնման:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դպրոցում երեխաները սովորում են արտահայտել իրենց տեսակետը, հարգալից վերաբերել ուրիշի կարծիքին, իրենց տեսակետը ենթարկել ընկերների կարծիքին, եթե նրանք ուսումնական իրավիճակը համադրում են առօրյա կյանքին այդ ժամանակ նրանք ավելի մոտ են ճշմարտությանը:

Քերականական նյութը մատուցելու ժամանակ անհրաժեշտ է կիրառել ուսուցման ինտերակտիվ մեթոդներ, քանի որ դրանք թույլ են տալիս նյութը մատուցել մատչելի, հետաքրքիր, վառ և պատկերավոր ձևով, նպաստում են գիտելիքների ավելի խորը յուրացմանը, հետաքրքրություն են առաջացնում գիտելիքների ձեռքբերման հանդեպ, ձևավորում են հաղորդակցական, անձնական, սոցիալական, ինտելեկտուալ բանիմացություն (գրագիտություն):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Ա.Պապոյան , Խ. Բաղիկյան «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն»
- Հ. Բարսեղյան, Փ. Մեյթիխանյան «Հայոց լեզու» 8-րդ դասարանի դասագիրք
- Գ. Մկրտչյան, Թ. Թովմասյան «Հայոց լեզու» 8-րդ դասարանի մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար